Արձանագրություն N 4

« ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/145» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

24.10.2019 թ.
ժ. 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյանը, Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Գևորգյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

I ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին
(Ա. Խաչիկյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 18.10.2019թ–ին տեղի է ունեցել հայտերի գնահատման նիստը, որի ժամանակ Հայրենի Տուն ՍՊԸ-ի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տրված եզրակացությունում առկա է անհամապատասխանություն հրավերով սահմանված պայմանների նկատմամբ և նիստը կասեցվել է 18.10.2019թ-ին ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի /այսուհետև՝ Կարգ/ 47-րդ կետով՝ առաջարկվել է Հայրենի Տուն ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

1.2 Հայրենի Տուն ՍՊ ընկերության հրավերով սահմանված ժամկետում չի շտկել վերը նշված անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի դրույթով՝ որոշեց մերժել մասնակցի կողմից ներկայացրած հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակց ի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

2.1 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Խաչիկյան
Անդամներ՝		Վ. Առուշանյան
		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Գևորգյան
Քարտուղար՝		Վ.Մեժունց